Ardshinbank

ԿԵՆՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025



Ardshinbank

Բովանդակություն

1. Ընդհանուր տեսլական 3
2. Կառավարում 8
3. Ռազմավարություն 12
4. Ռիսկերի կառավարում 15
5. Չափանիշներ և թիրախներ 19

Ընդհանուր տեսլական



1. Ընդհանուր տեսլական

Արդշինբանկ ԲԲԸ-ն Հայաստանի ֆինանսական համակարգի բոլոր հիմնական հատվածներում՝ մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ բանկային ծառայությունների ոլորտներում գործունեություն իրականացնող առաջատար ունիվերսալ առևտրային բանկ է: Որպես երկրի խոշորագույն ֆինանսական հաստատություններից մեկը՝ Բանկը առանցքային նշանակություն ունի տնտեսական կայունության ապահովման, կայուն զարգացման խթանման և ազգային ֆինանսական համակարգի ամրապնդման գործընթացում:

Բանկն իր գործունեությամբ աջակցում է տնտեսության առանցքային ոլորտների զարգացմանը՝ ներառյալ ենթակառուցվածքները, էներգետիկան և մասնավոր հատվածը, ինչպես նաև համագործակցում է միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ՝ նպաստելով միջազգային լավագույն փորձի և զարգացմանն ուղղված ֆինանսական միջոցների ներգրավմանը:

Հաշվի առնելով կլիմայական փոփոխությունների, անցումային ռիսկերի և միջազգային կարգավորող պահանջների աճող ազդեցությունը՝ Բանկը շարունակաբար ամրապնդում է կայունության սկզբունքների ինտեգրումը իր ռազմավարության, կառավարման և ռիսկերի կառավարման գործընթացներում: Այս համատեքստում կայունությունը դիտարկվում է ոչ միայն որպես պատասխանատու բանկային գործունեության բաղադրիչ, այլև որպես երկարաժամկետ դիմակայունության, արդյունավետ կապիտալի բաշխման և կայուն տնտեսական զարգացման ապահովման հնարավորություն:

Բանկի կայունության ռազմավարությունը հիմնված է Բնապահպանական, Սոցիալական և Կառավարման (ESG) սկզբունքների վրա և ուղղված է երկարաժամկետ արժեքի ստեղծմանը շահակիցների համար, ինչպես նաև Հայաստանի՝ որպես կայուն և պատասխանատու տնտեսության զարգացմանը:

Բանկի բնապահպանական նպատակներն են՝

- Նվազեցնել իր գործունեության և ֆինանսավորվող պորտֆելի բացասական բնապահպանական ազդեցությունը,
- Ամրապնդել կլիմայական ռիսկերի կառավարումը,
- Խթանել կայուն ֆինանսավորումը,
- Մշակել քանակական կլիմայական թիրախներ և անցումային ծրագիր,
- Կիրառել ավտոմատացված համակարգեր գործառնական և ֆինանսավորված CO_2 արտանետումների հաշվարկման և մոնիթորինգի համար,
- Ինտեգրել կլիմայական ռիսկի բաղադրիչները վարկային ռիսկի գնահատման գործընթացներում,
- Շարունակական լավարկել բնապահպանական և սոցիալական (E&S) ռիսկերի դասակարգումը կորպորատիվ վարկային պորտֆելում,
- Իրականացնել PCAF պարտավորությունները՝ ֆինանսավորված արտանետումների չափման և բացահայտման մասով:

Սոցիալական հենասյան առաջնահերթություններն են՝

- Ներառական և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովում,
- Հավասար հնարավորությունների և բազմազանության սկզբունքների կիրառում,
- Հասանելիության բարելավում հաշմանդամություն ունեցող հաճախորդների համար,
- Աշխատակիցների ներգրավվածության և ESG իրազեկման ամրապնդում,
- Բնապահպանական և սոցիալական հարցերի բողոքարկման մեխանիզմների շարունակական բարելավում,
- Աշխատակիցների սոցիալական փաթեթների և աշխատանք-կյանք հավասարակշռության քաղաքականությունների շարունակական լավարկում:

Կառավարման հենասյունը շեշտադրում է՝

- Թափանցիկ և հաշվետու կորպորատիվ կառավարման համակարգի ներդրում,
- ESG սկզբունքների ինտեգրում որոշումների կայացման գործընթացներում,
- Կայուն վարկավորման ներքին համակարգի ներդրում,
- Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն՝ կայուն ֆինանսավորման կարողությունների շարունակական զարգացման համար,
- Կայունության հետ կապված KPI-ների ինտեգրում բոլոր աշխատակիցների վարձատրության համակարգերում,
- Ազդարարարման համակարգի լավարկում:

2025 հաշվետու տարին հանդիսանում է կայունության ինստիտուցիոնալացման գործընթացի հետագա ամրապնդման փուլ Արդշինբանկում:

2025 թվականի ընթացքում Բանկը՝

- Շարունակել է հաշվարկել գործառնական և ֆինանսավորված ջերմոցային գազերի արտանետումները,
- Շրունակել է գործարկել ֆինանսավորված ջերմոցային գազերի արտանետումների և ֆիզիկական կլիմայական ռիսկերի հաշվարկի իրականացման համար “Climcycle” ծրագրային լուծումը
- Իրականացրել է պորտֆելի կլիմայական ռիսկերի նկատմամբ զգայունության հաշվարկ “Climcycle” ծրագրայի լուծման միջոցով
- Զարգացրել է բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգը բիզնես վարկավորման ոլորտում,
- Համալրել է կայունության ուղղությամբ պատասխանատու մասնագետների թիվը Համապատասխանության թիմում,
- Շարունակել է արտանետումների տվյալների որակի բարելավման և մոնիթորինգի ներքին համակարգերի զարգացումը:
- Հրապարակել է իր առաջին կենսակայունության հաշվետվությունը 2024 թվականի համար, ստորև հղումը.

https://ardshinbank.am/api/files/documents/sustainability-report-arm-2024.pdf

Վարքագծի կանոններ և գործարար էթիկա

Բանկի Վարքագծի կանոններով սահմանվում են բոլոր աշխատակիցներից ակնկալվող էթիկայի սկզբունքները և պրոֆեսիոնալ վարքագիծը: Դրանք խթանում են հաճախորդների, գործընկերների և բոլոր կոլեգաների հետ գործարար ամենատարբեր գործունեության և շփումների մեջ ազնվությունը, թափանցիկությունը և պատասխանատու որոշումների կայացումը,

- Կանոններով ամրապնդվում է հավասար վարքագիծ, մարդու իրավունքների հանդեպ հարգանքի և խտրականության բացառման մոտեցումը ամրագրող բանկի հանձնառությունը: Դրանցով սահմանվում են նաև պրոֆեսիոնալ վարքագծի, գաղտնիության և պատասխանատու հաղորդակցման ուղեցույցներ՝ աջակցելով վստահության միջավայրին, հաշվետվողականությանը և հաճախորդակենտրոն սպասարկմանը,
- Վարքագծի կանոնների միջոցով Բանկն ամրապնդում է իր ներքին կառավարման շրջանակը և խթանում է ամենօրյա գործառնություններում էթիկայի սկզբունքների ներառումը:

Կենսակայունության նախաձեռնություններ

Բանկը հանձնառու է կայունությունը ինտեգրել իր հիմնական գործունեության մեջ և ձևավորել բնապահպանական պատասխանատվության մշակույթ:

ESG ռազմա-վարության շրջանակում Բանկը ակտիվորեն իրականացնում է նախաձեռնություններ՝ գործառնական ածխածնային արտանետումները նվազեցնելու, ռեսուրսների արդյունավետությունը բարձրացնելու և կլիմայական փոփոխությունների մեղմմանը նպաստելու նպատակով:

Ստորևներկայացվածնախա-ձեռնությունները ընդգծում են Ardshinbank-ի շարունակական հանձնառությունը՝ ապա-հովելու չափելի բնապահպանական ազդեցություն և ներդնելու կայուն գործելա-կերպ ինչպես Բանկի ներսում, այնպես էլ ավելի լայն համայնքում:

Վերականգնվող էներգիա

Բանկի 20 շենքերի տանիքներին տեղադրված արևային վահանակները 2025 թվականի ընթացքում շարունակել են արտադրել մաքուր և վերականգնվող էներգիա, ինչի արդյունքում գրանցվել է ավանդական էներգիայի սպառման մոտ 20% տարեկան նվազում՝ զգալիորեն բարձրացնելով Բանկի շենքերի էներգաարդյունավետությունը և նվազեցնելով սեփական CO_2 արտանետումները: Ծրագիրը նպաստում է Բանկի ավելի լայն կլիմայական ռազմավարությանը՝ նվազեցնելով գործառնական ածխածնային հետքը:

Թափոնների կառավարում և վերամշակման նախաձեռնություն

Թափոնային աղտոտումը շարունակում է մնալ Հայաստանի համար նշանակալի բնապահպանական մարտահրավերներից մեկը, որտեղ թափոնների ոչ պատշաճ կառավարումը հանդիսանում է աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը:

Գիտակցելով թափոնների կուտակման բնապահպանական և կլիմայական բացասական ազդեցությունները՝ Բանկը շարունակում է կիրառել իր գործունեության շրջանակում թափոնների պատասխանատու կառավարման պրակտիկաների խթանման քաղաքականությունը:

2025 թվականին Բանկի գլխամասային գրասենյակում տեղադրվեցին թափոնների տեսակավորման համար նախատեսված առա-ջին աղբամանները՝ առանձնացված թափոնների վերամշակման գործընթացը ապահովելու համար: Այնուհետև գործընթացը շարունակվեց Բանկի մի շարք գլխամասային գրասենյակներում: Թափոնների տեսակավորման նախաձեռնությունը նախատեսվում է աստիճանաբար ներդնել Բանկի բոլոր մասնաճյուղերում:

Վերամշակման գործընթացի արդյունքում ստացվում են նոր արտադրանքներ: Օրինակ՝ տեսակավորված թուղթը վերամշակվում է թղթե տոպրակների և ստվարաթղթե փաթեթավորման նյութերի, իսկ պլաստիկ թափոնները վերամշակվում են պոլիէթիլենային խողովակների, թաղանթների և կցամասերի արտադրության հումքի:

2025 թվականին Արդշինբանկը հավաքել է 339 կգ պլաստիկ և 1,300 կգ թուղթ: Դա համարժեք է 883 լ նավթի և 22 հասուն ծառի խնայողության, կամ մոտ 1.7 տոննա CO_2e կրճատմանը:

Թափոնների տեսակավորման նախաձեռնությունը նախատեսվում է աստիճանաբար ներդնել Բանկի բոլոր մասնաճյուղերում:





Մաքրման աշխատանքներ Սևանա լճի ափամերձ տարածքներում

2025 թվականի հուլիսին Բանկի շուրջ 100 աշխատակից մասնակցել է բնապահպանական ուղղվածություն ունեցող կամավորական նախաձեռնության, որի շրջանակում իրականացվել են Սևանա լճի ափամերձ տարածքի մաքրման աշխատանքներ. շուրջ երեք ժամ իրականացվել են տարածքի մաքրման աշխատանքներ՝ նպաստելով բնական միջավայրի պահպանմանն ու բարելավմանը:

Նախաձեռնությունը հնարավորություն է տվել համատեղել թիմային ներգրավվածությունն ու համագործակցությունը բնապահպանական նշանակություն ունեցող գործնական գործունեության հետ՝ միաժամանակ բարձրացնելով աշխատակիցների իրազեկվածությունն ու մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանության հարցերում:

Բանկը կարևորում է բնապահպանական և սոցիալական պատասխանատվության սկզբունքները՝ դրանք դիտարկելով որպես իր կայուն զարգացման ռազմավարության անբաժանելի մաս: Նման նախաձեռնությունները նպաստում են ոչ միայն աշխատակիցների ներգրավվածության և թիմային մշակույթի զարգացմանը, այլև շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված դրական ազդեցության ձևավորմանը:



Համագործակցություն «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի հետ

2025 թվականի ընթացքում Արդշինբանկը շարունակել է համագործակցությունը «Իմ անտառ Հայաստան» հասարակական կազմակերպության հետ՝ Հայաստանի անտառվերականգնման և էկոհամակարգերի վերականգնման նախաձեռնություններին աջակցելու նպատակով:

Բանկի մասնակցությամբ 2025թ. իրականացվել է երկու ծառատունկ.

Առաջին ծառատունկը տեղի է ունեցել 2025 թվականի գարնանը՝ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքում, Երկիր մոլորակի միջազգային օրվան ընդառաջ: Նախաձեռնությանը մասնակցել է մոտ 40 աշխատակից՝ տնկելով շուրջ 300 ծառ:

Երկրորդ ծառատունկը իրականացվել է 2025 թվականի աշնանը՝ կրկին Ծաղկունք համայնքում, 50 աշխատակցի մասնակցությամբ, որի արդյունքում տնկվել է մոտ 200 ծառ:

Այս նախաձեռնությունները համախմբել են Բանկի աշխատակիցներին և գործընկերներին՝ ստեղծելով համագործակցային և ներգրավող միջավայր:

Յուրաքանչյուր տնկված ծառ դիտարկվում է որպես կոնկրետ քայլ՝ ուղղված շրջակա միջավայրի դեգրադացիայի նվազեցմանը և կլիմայական փոփոխությունների մեղմմանը:

Բանկը ընդհանուր առմամբ 2025 թվականի ընթացքում ֆինանսավորել է շուրջ 15,000 ծառերի տնկում, ինչի արդյունքում ակնկալվում է, որ առաջիկա 20–30 տարիների ընթացքում կկլանվի մոտ 3–5 հազար տոննա CO_2:

Հաշվի առնելով Հայաստանի կենսաբազմազանության բարձր կարևորությունը՝ նման նախաձեռնությունները նպաստում են կլիմայական փոփոխությունների հետեվանքների մեղմմանը, անտառների վերականգնմանը և հողերի դեգրադացիայի նվազեցմանը: Միաժամանակ դրանք աջակցում են տեղական համայնքներին՝ ստեղծելով աշխատատեղեր և խթանելով երկարաժամկետ սոցիալ-տնտեսական կայունությունը:

Այս նախաձեռնություններով Բանկը վերահաստատում է իր հանձնառությունը կայուն զարգացման և կենսաբազմազանության պահպանման նկատմամբ:



Կառավարում



2. Կառավարում

Խորհրդի վերահսկողությունը բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի և հնարավորությունների հարցերում

Խորհուրդը հիմնական պատասխանատվությունն է կրում բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի և հնարավորությունների համար: Կլիմայական ռիսկերը կառավարվում են որպես Բանկի ավելի ընդարձակ Բնապահպանական և սոցիալական (E&S) ռիսկերի շրջանակի բաղադրիչ և ներառվում են Բանկի կորպորատիվ կառավարման և ձեռնարկատիրական ռիսկի կառավարման կառուցվածքային համակարգի շրջանակում:

Խորհուրդը՝

- վերահսկում է բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերը,
- սահմանում և հաստատում է Բանկի ռիսկի ախորժակի շրջանակը, որի ներքո հստակ ներդրվում են ԲՍԿ նկատառումները,
- վերահսկում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի մակարդակների ներառումը ռիսկերի արժեքի գնահատման մեջ՝ ապահովելով վարկային ռիսկերի գնահատականում բնապահպանական և սոցիալական կատարողականի արտացոլումը,
- հետևում է կենսակայունության նպատակների, ռսիկերի ենթարկվելու և երկարաժամկետ արժեքների ստեղծման միջև համաձայնեցվածությունը.
- հաստատում է Բանկի Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականությունը, որով սահմանվում է բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի կառավարման համար համալիր կառուցվածքը, սկզբունքները և կառավարման չափորոշիչները.
- հաստատում է Համապատասխանության վարչության տարեկան պլանը: Տարեկան պլանը պարտադիր ներառում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարմանը, այդ թվում՝ կառավարման գործունեությանը, դիտանցման առաջնահերթություններին և վերահսկման վերանայմանը նվիրված բաժին:

Աուդիտի և ռիսկերի կոմիտե (Խորհրդին կից)

Աուդիտի և ռիսկերի կոմիտեն աջակցում է Խորհրդին ձեռնարկատիրական մասշտաբի, այդ թվում՝ բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի կատավարման վերահսկողության հարցում:

Կոմիտեն.

- վերահսկում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի չափումը և մշտադիտարկումը,
- վերանայում է Համապատասխանության ապահովման վարչության և Ռիսկերի կառավարման տնօրինության ներկայացրած հաշվետվությունները,
- հետևում է Խորհրդի հաստատած ռիսկի ախորժակի հայտարարության առնչությամբ Բանկի ռիսկային պրոֆիլին,
- վերահսկում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի առնչությամբ ներքին աուդիտի գործունեությունը:

Խորհուրդը և Աուդիտի և ռիսկերի կոմիտեն համատեղ ապահովում են բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի անկախ և համակարգված վերահսկողությունը:

Վարչության դերը բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի և հնարավորությունների գնահատման գործընթացում

Վարչությունը պատասխանատու է Խորհրդի կողմից սահմանված ռազմավարական ուղղության իրականացման և բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի գործառնական ինտեգրումն ապահովելու համար:

Վարչությունը՝

- վերահսկում է Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգերի (ESMS) կիրառումը և շարունակական բարելավումը,
- հաստատում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարմանը առնչվող հիմնական ներքին ընթացակարգերը՝ ապահովելով Խորհրդի

հավանությանը արժանացած Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականության գործառնական իրականացումը,

- ապահովում է բնապահպանական և սոցիալական (E&S) նկատառումների ներառումը վարկավորման, պորտֆելների կառավարման և գործառնական գործընթացներում,
- վերանայում է Համապատասխանության վարչությունից և Ռիսկերի կառավարման տնօրինությունից ստացված եռամսյակային հաշվետվությունները,
- ապահովում է գործարար ռազմավարության հետ կենսակայունության նպատակների համաձայնեցվածությունը:

Բնապահպանական և սոցիալական կառավարման կոմիտե (Վարչությանը կից)

Վարչությանը կից գործող Բնապահպանական և սոցիալական կառավարման կոմիտեն ծառայում է որպես Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի իրագործման և կատարելագործման համակարգման համար պատասխանատու խորհրդատվական մարմին.

Կոմիտեն.

- կազմակերպում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման հետ կապված աշխատանքը
- ապահովում է օրենսդրական պահանջների, լավագույն միջազգային փորձի և գործընկեր կառույցների հետ պայմանագրային պարտավորությունների հետ համապատասխանությունը.
- իրեն վերապահված մանդատի շրջանակներում վերանայում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի հետ կապված հարցերը և տալիս է խորհուրդներ

2025 թվականին Բնապահպանական և սոցիալական կառավարման կոմիտեն անցկացրել է չորս պաշտոնական նիստ՝ արտացոլելով Բանկի շարունակական հանձնառությունը՝ ամրապնդելու բնապահպանական և սոցիալական հարցերի կառավարման և վերահսկողության համակարգը:

Ռիսկերի կառավարման տնօրինություն և համապատասխանության ապահովման վարչություն

Արդշինբանկում բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի կառավարման գործառնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման տնօրինությունը, որի կազմում է Համապատասխանության ապահովման վարչությունը:

Համապատասխանության ապահովման վարչության շրջանակում գործում Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ուղղությունը պատասխանատու է՝

- Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման, դասակարգման և մոնիթորինգի համար,
- Կլիմայական ֆիզիկական և անցումային ռիսկերի նույնականացման և գնահատման համար,
- ESG և կլիմայական գործոնների ինտեգրման համար ներքին ռիսկերի կառավարման և վարկային գնահատման գործընթացներում,
- Բանկի Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման շրջանակի, ներքին քաղաքականությունների և կարգավորող պահանջների նկատմամբ համապատասխանության վերահսկման համար,
- Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ESMS) ներդրման և շարունակական կատարելագործման աջակցության համար,
- Բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության համախմբման և հաշվետվությունների ներկայացման համար Վարչությանը, Աուդիտի և ռիսկերի կոմիտեին, ինչպես նաև Բանկի խորհրդին:

2025 թվականին Բանկը շարունակել է ամրապնդել իր բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգը՝ ներքին կառավարման գործընթացների, կոմիտետային վերահսկողական մեխանիզմների և ESG հաշվետվությունների պրակտիկայի կատարելագործման միջոցով: Մասնավորապես, Բանկը վերանայել է

Աուդիտի և ռիսկերի կոմիտեի կանոնակարգերը՝ դրանք առավել համահունչ դարձնելու զարգացող կառավարման և ռիսկերի կառավարման պահանջներին:

2025 թվականին Բանկը շարունակել է բարելավել իր կորպորատիվ, բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակներն ու թափանցիկության պրակտիկաները:

Կորպորատիվ կառավարման տարեկան հաշվետվությունը ներկայացնում է մանրամասն բացահայտումներ Բանկի կառավարման կառուցվածքի, Խորհրդի և կոմիտեների կազմի,ներքին վերահսկողական միջավայրի, բաժնետերերի իրավունքների և որոշումների կայացման գործընթացների վերաբերյալ՝ նպաստելով միջազգային կառավարման ստանդարտներին և լավագույն փորձին համապատասխանությանը:

Միաժամանակ, 2025 թվականին հրապարակվել է նաև Բանկի 2024 թվականի կենսակայունության հաշվետվությունը, որն անդրադառնում է Բանկի բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) ուղղություններով իրականացված նախաձեռնություններին, առաջընթացին և երկարաժամկետ հանձնառություններին:

Ռազմավարություն



3. Ռազմավարություն

2025 թվականին հաստատված Բանկի 2026–2028 թվականների ռազմավարությունը ձևավորում է համապարփակ մոտեցում՝ ուղղված բնապահպանական, սոցիալական և կլիմայական (ESG) ռիսկերն ու հնարավորությունները կառավարման գործընթացներում համակարգված կերպով ինտեգրելուն՝ ապահովելով երկարաժամկետ և կայուն զարգացում:

Բնապահպանական՝

Կլիմային վերաբերող քանակական թիրախների սահմանում և տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակում Բանկի անցումային պլանի մշակում (2026–2028 թթ.)

Բանկի գործառնական և ֆինանսավորվող CO_2 արտանետումների հաշվարկման ավտոմատացված համակարգի (Climcycle) կիրառում և արտանետումների դինամիկայի մշտադիտարկում՝ վարկային պորտֆելի փոփոխությանը զուգընթաց:

Գործառնական և ֆինանսավորվող CO_2 արտանետումների տվյալների որակի շարունակական բարելավում

Շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ազդեցության նվազեցման նպատակով գլխամասային գրասենյակում ներդրված աղբի տեսակավորման համակարգի ընդլայնում՝ Բանկի ամբողջ համակարգով,

- Շարունակական բնապահպանական իրազեկման միջոցառումների կազմակերպում Բանկի աշխատակիցների և արտաքին շահառուների համար,
- Կլիմայական ռիսկերի կառավարման գործառույթի շարունակական բարելավում և հաշվետվողականության հստակեցում,
- Կլիմայական ռիսկի բաղադրիչի ինտեգրում վարկային ռիսկի գնահատման գործընթացում (2026–2028 թթ.),
- Բանկի բիզնես վարկերի բնապահպանական և սոցիալական (E&S) ռիսկերի դասակարգման գործընթացի շարունակական կատարելագործում,
- Կայունությանը և կլիմային վերաբերող հաշվետվողականության ամենամյա հրապարակում,
- PCAF անդամակցության շրջանակում հանձնառությունների իրականացում՝ վարկային պորտֆելին առնչվող ջերմոցային գազերի (GHG) արտանետումների չափում և հրապարակում (2026–2028 թթ.),

Սոցիալական՝

- Ներառական աշխատավայրի ձևավորում՝ հավասար հնարավորությունների, փոխադարձ հարգանքի և բազմազանության խթանմամբ՝ անկախ ազգությունից, սեռից, կրոնից, տարիքից կամ կարողություններից,
- Հաշմանդամություն ունեցող հաճախորդներին սպասարկման պայմանների բարելավում և ներառական ծառայությունների ու պրակտիկաների զարգացում,
- Դրական աշխատանքային մշակույթի խթանում՝ աշխատակիցների ներգրավվածության, հետադարձ կապի և բաց հաղորդակցության ամրապնդմամբ, ինչպես նաև գեյմիֆիկացիայի միջոցով ESG նախաձեռնություններին մասնակցության խրախուսմամբ,
- Կայուն զարգացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված ուսումնական ծրագրերի իրականացում Բանկի աշխատակիցների համար,
- Work-Life Balance-ի բարելավում՝ ճկուն աշխատանքային պայմանների, ազատ ժամերի, լրացուցիչ հանգստյան օրերի և հեռավար աշխատանքի հնարավորությունների ընդլայնմամբ,
- Բանկի գործող ազդարարման համակարգի լավարկում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխանեցմամբ
- Բնապահպանական և սոցիալական բողոքների կառավարման համակարգի շարունակական կատարելագործում, ինչպես նաև արտաքին շահառուների իրազեկվածության բարձրացում համակարգի կիրառման վերաբերյալ
- Ապահովագրական փաթեթների և աշխատավայրի պայմանների շարունակական բարելավում՝ աշխատակիցների բարեկեցության և սոցիալական պաշտպանվածության բարձրացման նպատակով:

Կառավարում՝

- Տարեկան թափանցիկ հաշվետվողականության ապահովում՝ սկսած 2025 թվականի հաշվետու տարվա համապարփակ հաշվետվության հրապարակումից,

- Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական կատարելագործում, այդ թվում՝ վարչության սերնդափոխության ծրագրի հաստատում, ինչպես նաև կորպորատիվ կառավարման զեկույցի և տարեկան հայտարարագրի հրապարակում Բանկի պաշտոնական կայքում,
- Բանկի ազդարարման համակարգի բարելավում և դրա վերաբերյալ ներքին ու արտաքին շահառուների իրազեկվածության բարձրացում (2026 թ.),
- Կայուն վարկավորման չափանիշների սահմանում (2026 թ. 1-ին եռամսյակ) և դրանց վերանայում (2026 թ. 4-րդ եռամսյակ)
- Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն՝ կայուն վարկավորման ներքին համակարգերի ներդրման և զարգացման նպատակով (2026 թ.),
- Միջազգային գործընկերների հետ համագործակցություն՝ կայուն ֆինանսավորման գործիքների զարգացման նպատակով, կայուն զարգացման խթանման միջոցների ներգրավում և միջազգային լավագույն փորձի ինտեգրում,
- Բնապահպանական, սոցիալական և համապատասխանության պահանջների ստուգման շրջանակի ընդլայնում՝ ներառելով գնումների գործընթացում ներգրավված բոլոր գործընկեր կազմակերպությունները,
- Բանկի վարձատրության համակարգում ներդրված կայունության KPI-ների շարունակական ընդլայնում:

Ռիսկերի կառավարում



4. Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարում

Բնապահպանական և սոցիալական (E&S) բաղադրիչի ինտեգրում վարկավորման գործընթացներում

2025 թվականին Բանկը, հետամուտ լինելով իր ռազմավարական նպատակներին և կայուն զարգացման ուղղությամբ ստանձնած հանձնառություններին, բնապահպանական և սոցիալական (E&S) բաղադրիչը ինտեգրել է վարկավորման գործընթացներում՝ վարկային ռիսկի հաշվարկման գործընթացքում:

Նշված մոտեցումը նպաստում է ռիսկերի առավել համապարփակ գնահատմանը, պատասխանատու ֆինանսավորմանը և Բանկի երկարաժամկետ կայունության ապահովմանը:

2025 թվականին Բանկը վերանայել և կատարելագործել է իր Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգը (ESMS)՝ ապահովելով վարկավորման գործընթացում բնապահպանական և սոցիալական ռիսկերի համակարգված բացահայտում, գնահատում և արդյունավետ կառավարում:

Բոլոր կորպորատիվ հաճախորդները (բացառությամբ մանրածախ վարկավորման) անցնում են բնապահպանական և սոցիալական ռիսկերի բացահայտման սկրինինգ և գնահատում՝ համաձայն IFC-ի ստանդարտների և ազգային կարգավորող պահանջների:

Այն դեպքերում, երբ բացահայտվում են բնապահպանական կամ սոցիալական ռիսկեր, մշակվում են մեղմման միջոցառումներ և, անհրաժեշտության դեպքում, Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրեր (ESAPs):

Բանկը նաև իրականացնում է այդ միջոցառումների կատարման շարունակական մշտադիտարկում՝ արդյունավետ ռիսկերի կառավարումն ու կայունության չափանիշներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Կլիմայական ռիսկերի նույնականացում և սցենարային շրջանակ

2025 թվականին «Արդշինբանկ»-ը “Climcycle” ծրագրային ապահովման միջոցով իրականացրելէֆիզիկականկլիմայականռիսկերի համակարգված գնահատում, որի նպատակն է աստիճանաբար ինտեգրել կլիմայական գործոնները ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման շրջանակում: Գնահատումը ներառել է Բանկի Կորպորատիվ և ՓՄՁ վարկային պորտֆելը և կիրառվել է որպես ուղղահայաց առարկայական սկրինինգի գործիք՝ նպատակ ունենալով գնահատել պորտֆելի խոցելիությունը և զգայունությունը ֆիզիկական կլիմայական ռիսկային գործոնների նկատմամբ: Աղյուսակով ներկայացվում են պորտֆելի ֆիզիկական կլիմայական ռիսկերի գնահատման համախմբված արդյունքները: Վերլուծությունը ներառում է համապատասխան RCP[1] սցենարների ամբողջական շրջանակը: Ստորև աղյուսակը ներկայացնում է պորտֆելի ֆիզիկական կլիմայական ռիսկերի քանակական գնահատման արդյունքները՝ ըստ տարբեր կլիմայական ռիսկերի և տարբեր սցենարների միջին ազդեցության (mean risk value): Վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել պորտֆելի հիմնական կլիմայական ռիսկային ուղղությունները, գնահատել դրանց ազդեցության մակարդակը տարբեր սցենարների դեպքում և ապահովել ավելի ամբողջական պատկեր պորտֆելի կլիմայական խոցելիության վերաբերյալ՝ աջակցելով ռիսկերի կառավարման և ռազմավարական որոշումների կայացման գործընթացներին:

Պորտֆելի վրա կլիմայական վտանգների առավելագույն հնարավոր ազդեցությունը

Ռիսկի տեսակ	Սցենար RCP 2.6 Ռիսկի միջին ազդեցություն	Սցենար RCP 4.5 Ռիսկի միջին ազդեցություն	Սցենար RCP 6.0 Ռիսկի միջին ազդեցություն	Սցենար RCP 8.5 Ռիսկի միջին ազդեցություն	Բոլոր սցենարների ռիսկի միջին ազդեցություն[2]
Հորդառատ տեղումներ	0.000	0.2871	0.000	0.2820	0.2855
Տարեկան տեղումներ	0.1592	0.0000	0.1613	0.1638	0.1614
Տեղումների ռեժիմի փոփոխություններ	0.0000	0.0953	0.0000	0.1067	0.0991
Ձյան տեղումներ	0.4276	0.0000	0.4472	0.3908	0.4282
Կարկուտ	0.7417	0.000	0.6648	0.7509	0.7055
Քամի	0.1755	0.1755	0.1755	0.1755	0.1755
Անտառային հրդեհներ	0.0681	0.0000	0.0408	0.0000	0.0503
Ջերմաստիճանի փոփոխականություն	0.0000	0.7383	0.0000	0.7936	0.7567
Ջերմային սթրես	0.3268	0.3266	0.3273	0.3267	0.3267
Սառնամանիքի օրեր	0.4628	0.4770	0.0000	0.5420	0.4897
Ջրային ռեսուրսների սթրես	0.0000	0.9134	0.0000	0.9280	0.9181
Հողի էրոզիա	0.1890	0.1820	0.0000	0.1840	0.1842

Արդյունքները ներկայացված են միջինացված ցուցանիշների տեսքով՝ արտացոլելով տարբեր կլիմայական ռիսկերի միջին ազդեցության մակարդակը համապատասխան սցենարային գնահատումների հիման վրա:

[1] RCP 2.6 - Վաղ և խիստ կլիմայական քաղաքականությունների իրականացումը հանգեցնում է ջերմոցային գազերի արտանետումների կտրուկ կրճատման և գլոբալ էներգետիկ համակարգի արագ դեկարբոնիզացման: Այս սցենարում արտանետումները հասնում են իրենց գագաթնակետին վաղ փուլում և այնուհետև սկսում են արագ նվազել՝ պայմանավորված վերականգնվող էներգիայի լայնածավալ կիրառմամբ, էներգաարդյունավետության բարձրացմամբ և ցածր ածխածնային տեխնոլոգիաների արագ ներդրմամբ: Մինչև 2100 թվականը գլոբալ ջերմաստիճանի աճը սահմանափակվում է մոտ 1.5°C–2°C-ի շրջանակում՝ ապահովելով կլիմայական ռիսկերի զգալի նվազում երկարաժամկետ հատվածում:

RCP 4.5 - Կլիմայական քաղաքականությունները իրականացվում են մասամբ և աստիճանաբար, ինչի արդյունքում արտանետումները կայունանում են միջին մակարդակի շուրջ՝ առանց կտրուկ նվազման: Էներգետիկ համակարգում տեղի է ունենում աստիճանական անցում ավելի մաքուր տեխնոլոգիաների, սակայն հանածո վառելիքի օգտագործումը շարունակում է պահպանվել զգալի մասշտաբով: Այս սցենարում մինչև 2100 թվականը գլոբալ միջին ջերմաստիճանի աճը կազմում է մոտ 2.4°C–3°C ՝ առաջացնելով չափավոր, բայց շարունակական կլիմայական ռիսկեր մինչև դարի վերջ:

RCP 6.0 - Կլիմայական քաղաքականությունների իրականացումը մասնակի է և ոչ համաչափ, ինչի արդյունքում արտանետումները շարունակվում են աճել կամ դանդաղ նվազել երկարաժամկետ հատվածում: Էներգետիկ անցումը տեղի է ունենում դանդաղ տեմպերով, և հանածո վառելիքից կախվածությունը պահպանվում է զգալի մակարդակում: Այս զարգացումների արդյունքում մինչև 2100 թվականը գլոբալ միջին ջերմաստիճանի աճը հասնում է մոտ 3°C–4°C՝ ինչը հանգեցնում է ֆիզիկական կլիմայական ռիսկերի զգալի ուժեղացման տարբեր տարածաշրջաններում:

RCP 8.5 - Կլիմայական քաղաքականությունների սահմանափակ կամ բացակայող իրականացումը հանգեցնում է ջերմոցային գազերի շարու-նակական և արագ աճի: Էներգետիկ համա-կարգը շարունակում է մեծապես կախված մնալ հանածո վառելիքից, իսկ ցածր ածխա-ծնային տեխնոլոգիաների ներդրումը մնում է սահմանափակ: Արդյունքում մինչև 2100 թվա-կանը գլոբալ միջին ջերմաստիճանի աճը կա-րող է հասնել մոտ 4.3°C–5°C կամ ավելի՝ ինչը հանգեցնում է խիստ և լայնածավալ ֆիզիկական կլիմայական ռիսկերի ամբողջ աշխարհում:

[2] Հարկ է նշել, որ տարբեր RCP սցենարներ վերջնական միջինացված արդյունքի հաշվարկին մասնակցում են տարբեր կշիռներով. RCP 2.6 և RCP 8.5 սցենարները հաշվարկում ներառվում են 1 կշռով, իսկ RCP 4.5 և RCP 6.0 սցենարները՝ 2 կշռով: Այս մոտեցման նպատակն է ապահովել ավելի հավասարակշռված արդյունք՝ ավելի մեծ կշիռ տալով միջանկյալ սցենարներին, որոնք սովորաբար համարվում են ավելի հավանական զարգացման ուղիներ, քան ծայրահեղ սցենարները:

Չափանիշներ և թիրախներ



5. Չափանիշներ և թիրախներ[3]

2025 թվականին Բանկը շարունակել է զարգացնել ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկ-ման իր գործելակերպը՝ կիրառելով Climcycle ծրագրային լուծման օգտագործման հավաստագիր և ծրագրի միջոցով իրականացնելով ձեռնարկատիրական վարկային պորտֆելի ֆինանսավորվող արտանետումների հաշվարկը:

Ֆինանսավորվող արտանետումները ըստ ոլորտների

Քանի որ Հայաստանին հատուկ արտանե-տումների գործոնին առնչվող տվյալը ներկայումս բավարար աստիճանի ուսումնասիրված չէ, Բանկը հիմք է ընդունել PCAF-ի տվյալների շտեմարանից ստացված միջնորդ երկրների գործոնները: Միջնորդ երկրներ ընտրելիս «Արդշինբանկ»-ը կիրառել է համեմատականության մի շարք չափանիշներ, այդ թվում՝ էներգիայի կառուցվածքը, ՀՆԱ կառուցվածքի և բնակ-չությանը բնորոշ հատկանիշների նմա-նություն՝ Հայաստանի տնտեսական և բնապահպանական համատեքստին հնարա-վորինս մոտ ներկայացուցչականություն ապա-հովելու համար:

Ստորև աղյուսակով ներկայացնում ենք Բանկի 2025 թվականի ֆինանսավորվող արտանետումների հաշվարկների արդ-յունքները:

Ֆինանսավորվող ոլորտ	Ծավալ (%)		Ֆինանսավորվող արտանետումներ (tCO_2e)		Ընդհանուր արտանետումների մասնաբաժին (%)	
	2024	**2025**	**2024**	**2025**	**2024**	**2025**
Գյուղատնտեսություն	5.49%	4.01%	57,307	232,254	8.19%	51.15%
Հանքարդյունաբերություն	9.19%	5.06%	15,022	52,937	2.15%	4.09%
Արտադրություն	6.77%	7.38%	55,329	88,765	7.90%	6.86%
Էլեկտրականություն և գազ	5.86%	11.37%	47,264	149,627	6.75%	11.56%
Ջրամատակարարում և թափոններ	0.00%	0.00%	36	1,177	0.01%	0.09%
Շինարարություն	21.97%	21.06%	33,228	21,293	4.75%	1.64%
Մեծածախ և մանրածախ առևտուր	9.72%	12.32%	220,902	47,353	31.55%	3.66%
Տրանսպորտ	3.10%	2.50%	153,368	13,208	21.91%	1.02%
Սնունդ և կեցավայրով ապահովում	11.43%	7.27%	8,854	34,218	1.26%	2.64%
Հրատարակչական գործունեություն և լրատվամիջոցներ	0.00%	0.82%	4	13,777	0.00%	1.06%
Հեռահաղորդակցություն և SS	6.06%	3.01%	14,492	3,415	2.07%	0.26%
Անշարժ գույք	3.57%	3.31%	3,848	2,442	0.55%	0.19%
Մասնագիտական գործունեություն	0.38%	0.44%	2,247	1,928	0.32%	0.15%
Վարչական ծառայություններ	0.31%	0.20%	1,417	1,864	0.20%	0.14%
Հանրային կառավարում	15.13%	19,92%	84,677	196,249	12.09%	15.16%
Կրթություն	0.03%	0.09%	31.20	124	0.00%	0.01%
Առողջապահություն և սոցիալական աշխատանք	0.45%	0.89%	1,604	1,663	0.23%	0.13%
Արվեստ և ժամանց	0.16%	0.10%	59	1,220	0.01%	0.09%
Այլ ծառայություններ	0.36%	0.24%	421	1,090	0.06%	0.08%
Ընդհանուր	100%	100%	700,120	864,612	100%	100%

[3] **Քանի որ 2025 թվականը Բանկի համար հանդիսանում է PCAF մեթոդաբանությանը համապատասխան ֆինանսավորվող արտանետումների չափման և բացահայտման երկրորդ տարին, արդյունքները հարկ է դիտարկել որպես նախորդ տարվա համեմատ բարելավված, սակայն դեռևս շարունակաբար զարգացող գնահատում՝ հիմնված առկա տվյալների, ենթադրությունների և ոլորտային արտանետման գործոնների վրա:**
Թեպետ Բանկը շարունակել է ամրապնդել մեթոդաբանական համապատասխանությունը և ընդլայնել ճանաչված միջազգային շրջանակների կիրառությունը, որոշ սահմանափակումներ դեռ պահպանվում են՝ կապված տվյալների հասանելիության, վարկառուի մակարդակով արտանետումների սահմանափակ բացահայտման և կլիմայական հաշվարկման մեթոդաբանությունների շարունակական զարգացման հետ:
Մասնավորապես, հաշվարկները դեռևս մասամբ հիմնված են մոդելային գնահատումների և ոլորտային փոխարինող ցուցիչների վրա այն դեպքերում, երբ վարկառուի մակարդակով իրական արտանետումների տվյալներ հասանելի չեն: Այդ պատճառով ստացված արդյունքները պետք է դիտարկել որպես շարունակաբար ճշգրտվող գնահատումներ, այլ ոչ թե լիովին փաստացի չափումներ Բանկի ֆինանսավորվող արտանետումների ամբողջական ծավալի վերաբերյալ:
Բանկը այս գործընթացը դիտարկում է որպես շարունակական զարգացման ուղղություն և նպատակ ունի առաջիկա հաշվետու ժամանակահատվածներում, տվյալների որակի բարելավմանը, ծածկույթի ընդլայնմանը և ներքին մեթոդաբանությունների կատարելագործմանը զուգընթաց, աստիճանաբար բարձրացնել ֆինանսավորվող արտանետումների հաշվարկների ճշգրտությունը, համադրելիությունը և մանրամասնությունը:

2025 թվականին Բանկի ձեռնարկատիրական վարկային պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 67.8%-ով: Պորտֆելի ընդլայնմանը զուգահեռ ֆինանսավորվող արտանետումների բացարձակ աճը կազմել է 700,120 tCO_2e-ից մինչև 864,612 tCO_2e՝ արձանագրելով շուրջ 23.5% աճ, սակայն՝ միևնույն ժամանակ, արտանետումների ինտենսիվությունը (ֆինանսավորվող արտանետումների հարաբերակցությունը վարկային պորտֆելի ծավալին) նվազել է շուրջ 28.16%-ով: Եթե 2024 թվականին յուրաքանչյուր 1 մլն դրամ վարկային պորտֆելին բաժին էր ընկնում մոտ 1.29 tCO_2e, ապա 2025 թվականին՝ մոտ 0.93 tCO_2e:

Արտանետումների ինտենսիվության նվազումը պայմանավորված է պորտֆելի կառուցվածքային փոփոխություններով.

2025 թվականին պորտֆելի աճը հիմնականում ձևավորվել է համեմատաբար ցածր ածխածնային ինտենսիվություն ունեցող ոլորտների ֆինանսավորման ընդլայնման հաշվին: Միաժամանակ, տվյալների որակի և հաշվարկային մոտեցումների բարելավումը ևս նպաստել է արտանետումների գնահատման առավել ճշգրիտ արտացոլմանը և արտանետումների ինտենսիվության նվազմանը:

Նշենք, որ 2025 թվականի համար ֆինանսավորվող CO_2 արտանետումների հաշվարկն իրականացվել է Climcycle-ը ծրագրային լուծման կիրառմամբ, որը հավատարմագրված է PCAF-ի կողմից[4]. Վերջինս երաշխավորում է հաշվարկների միջազգային h ամապատասխանություն, բարձր վստահելիություն և արդյունքների համադրելիություն բանկային և ESG հաշվետվությունների լավագույն պրակտիկայի հետ:

[4] **https://carbonaccountingfinancials.com/en/partners**

Ֆինանսավորվող արտանետումների շրջանակի բաշխում

Ֆինանսավորվող արտանետումների Շրջանակ[5]	Արտանետումներ (tCO_2e)		Մասնաբաժին (%)	
	2024	**2025**	**2024**	**2025**
Շրջանակ 1	296,505	119,827	42.35%	13.86%
Շրջանակ 2	11,471	40,108	1.64%	4.64%
Շրջանակ 3	392,142	704,676	56.01%	81.50%
Ընդհանուր	700,120	864,612	100%	100%

[5] **Շրջանակ 1 (Ուղղակի արտանետումներ).**
Արտանետումները ծագում են ֆինանսավորվող անձանց պատկանող կամ վերջիններիս կողմից վերահսկվող աղբյուրներից, ինչպիսիք են օրինակ՝ ընկերության տարածքում վառելիքի այրումը, արդյունաբերական գործընթացները կամ ընկերությանը պատկանող մեքենաները:
Շրջանակ 2 (Էներգիայի սպառման հետևանքով առաջացող անուղղակի արտանետումներ
Արտանետումները կապված են ֆինանսավորվող կազմակերպությունների կողմից սպառվող գնված էլեկտրաէներգիայի, ջեռուցման կամ հովացման գործընթացների գեներացման հետ: Թեպետ այս արտանետումները տեղի են ունենում էներգաարտադրողի աշխատանքային տարածքներում, դրանք վերագրվում են էներգիա օգտագործող կազմակերպություններին:
Շրջանակ 3 (Այլ անուղղակի արտանետումներ).
Մյուս բոլոր անուղղակի արտանետումները տեղի են ունենում ֆինանսավորվող կազմակերպությունների արժեքի շղթայի մասշտաբով: Այն կարող է ներառել ձեռք բերված ապրանքներին և ծառայություններին, փոխադրումներին, գործուղումներին և վաճառված ապրանքների օգտագործմանը առնչվող արտանետումները:

Ֆինանսավորվող արտանետումների հաշվարկման համար կիրառվող տվյալների որակի բաշխում (2025)

Թափանցիկության ապահովման և ֆի-նանսավորվող արտանետումների հաշվարկների արժանահավատության բարձրա-ցման նպատակով Բանկը գնահատում է վերլուծության ընթացքում կիրառվող տվյալները՝ հաշվի առնելով դրանց մանրամասնության և ճշգրտության մակարդակը:

PCAF միավորի կարգ[6]	Ֆինանսավորվող արտանետումների մասնաբաժին (%)	
	2024	**2025**
Score 4 / 3a (Model-based, higher granularity) Միավոր 4/ 3a (Մոդելի վրա հիմնված ավելի բարձր ճշգրտություն)	18.40%	26.32%
Score 5 / 3c (Industry proxy / sector averages) Միավոր 5/ 3c (Արդյունաբերական ցուցիչ/ոլորտի միջին ցուցանիշներ)	81.60%	73.68%
Ընդհանուր	100%	100%

[6]**Միավոր 4/ 3a Մոդելի վրա հիմնված ավելի բարձր աստիճանի մանրակրկտություն. Արտանետումները հաշվարկվում են օգտագործելով բարձր կետայնությամբ մոդելների հետ համակցված հաճախորդի կամ ակտիվի մակարդակի տվյալներ, որոնք ճշգրիտ և մանրակրկիտ չափումներ են ապահովում:**
Միավոր 5/3 c – Արդյունաբերական ցուցիչ/ոլորտի միջին ցուցանիշներ. Հստակ տվյալների բացակայության պարագայում ոլոտային կամ արդյունաբերական միջին ցուցանիշներ, որոնք հետևողական են, բայց ոչ այնքան մանրակրկիտ:

Բանկը՝ իր հաշվարկներն իրականացնելիս, 2025 թվականին բարելավել է տվյալների որակը՝ ավելացնելով բարձր ճշգրտությամբ աղբյուրների մասնաբաժինը: Score 4-ի ցուցանիշը 2024 թվականի 18.40%-ից 2025 թվականին աճել է մինչև 26.32%, (7.92% աճ): Մենք նախատեսում ենք շարունակել տվյալների որակի հետագա կատարելագործման գործընթացը՝ նպատակ ունենալով հետագա հաշվետու ժամանակահատվածներում էլ ավելի բարձրացնել բարձր ճշգրտությամբ տվյալների աղբյուրների մասնաբաժինը:

Գործառնական (սեփական) արտանետումներ (2025)

Կլիմայական ռիսկի կառավարման և թափանցիկության հանձնառությունների շրջանակում «Արդշինբանկ»-ը հաշվետու տարվա համար հաշվարկել է գործառնական ջերմոցային գազերի արտանետումների ցուցանիշները:

Արտանետումները գնահատվել են ըստ Շրջանակ 1-ի Շրջանակ 2-ի և Շրջանակ 3-ի՝ առանձին ընտր-ված կատեգորիաների:

Կոնսոլիդացված գործառնական արտանետումների աղյուսակ (2025)

Արտանետումների կարգ	Նկարագրություն	Արտանետումներ (tCO_2e)		Գործառնական արտանետումների մասնաբաժին (%)	
		2024	**2025**	**2024**	**2025**
Շրջանակ 1	Վառելիքի այրման հետևանքով ստացվող ուղղակի արտանետումներ (շարժական եղանակով մեքենաներում իրականացվող այրում)	86	86	0.55%	0.67%
Շրջանակ 2	Անուղղակի արտանետումներ գնված էլեկտրաէներգիայից և ջեռուցման/հովացման համակարգերից	1,448	1,528	9.4%	11.91%
Շրջանակ 3	Գնված ապրանքներ և ծառայություններ, կապիտալ ապրանքներ, թափոններ և ջուր, աշխատակիցների տեղաշարժ	13,867	11,210	90%	87.4%
	Այդ թվում My Forest Armenia հետ համատեղ անտառվերականգնման ծրագրի արդյունքում կրճատված CO2 քանակություն	- 70	- 200		
Ընդհանուր գործառնական արտանետումներ		15,401	12,825	100%	100%

Բանկի 2025թ. ընդհանուր գործառնական արտանետումները կազմել են 12,825տ. CO_2e՝ 2024 թվականի 15,401 տ. CO_2e-ի համեմատ արձանագրելով շուրջ 16.7% նվազում:

Ընդհանուր գործառնական արտանետումների նվազումը հիմնականում պայմանավորված է Շրջանակ 3-ում ներառված կապիտալ ապրանքների (Capital goods) հետ կապված արտանետումների կրճատմամբ:

Արտանետումների կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական մասնաբաժինը շարունակում է կազմել Շրջանակ 3-ը, մինչդեռ ուղղակի և էներգիայի սպառման հետ կապված արտանետումները հարաբերականորեն սահմանափակ են:

Ի հայտ են գալիս մի քանի կարևոր դիտարկումներ.

Շրջանակ 1-ի արտանետումները կազմել են 86 տ. CO_2e կամ ընդհանուր գործառնական արտանետումների 0.67%-ը և հիմնականում կապված է վառելիքի ուղղակի սպառման հետ՝ շարունակելով ունենալ սահմանափակ ազդեցություն ընդհանուր ածխածնային հետքի վրա:

Շրջանակ 2-ի արտանետումները կազմել են 1,528 տ. CO_2e կամ ընդհանուրի 11.91%-ը՝ արտացոլելով գնված էլեկտրաէներգիայի և ջեռուցման/հովացման համակարգերի սպառումը, որը նույնպես շարունակում է ունենալ սահմանափակ ազդեցություն ընդհանուր ածխածնային հետքի վրա:

Շրջանակ 3-ը շարունակում է մնալ գերակշռող կատեգորիան՝ կազմելով 11,210 տ. CO_2e, կամ ընդհանուր գործառնական արտանետումների 87.4%-ը: Շրջանակ 3-ի արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում աշխատակիցների տեղաշարժերին (Employee commuting, Category 7), որը կազմել է 8,739 տ. CO_2e: Համեմատության համար՝ 2024 թվականին նույն ցուցանիշը կազմել է 7,429 տ. CO_2e, այն դեպքում, երբ Բանկի աշխատակիցների թիվը կազմել է շուրջ 1,800, իսկ 2025 թվականին՝ շուրջ 2,200: Արտանետումների աճը պայմանավորված է ինչպես աշխատակիցների թվի աճով, այնպես էլ տվյալների հավաքագրման և հաշվարկման շրջանակի ընդլայնմամբ ու հաշվարկների ճշգրտության բարձրացմամբ:

Միաժամանակ, «My Forest Armenia» նախաձեռնության շրջանակում իրականացված անտառվերականգնման ծրագրերի արդյունքում հաշվարկվել է 200 տ. CO_2e կրճատում, ինչը նպաստել է Բանկի զուտ գործառնական ածխածնային հետքի նվազեցմանը: Հատկանշական է ընդգծել, որ կրճատված արտանետումների ծավալը ավելի քան կրկնակի անգամ գերազանցում է Բանկի ուղղակի՝ Շրջանակ 1 արտանետումները:

Կայունության չափանիշները 2025թ. բիզնես վարկային պորտֆելում

2025 թվականին Բանկը իրականացնել է կորպորատիվ և ՓՄՁ վարկային պորտֆելի դասակարգում ըստ կայունության չափանիշների՝ նպատակ ունենալով ձևավորել առավել ամբողջական պատկերացում պորտֆելի կայունության մակարդակի և դրա ազդեցության վերաբերյալ:

Դասակարգման շրջանակում առանձնացվել են այն վարկերը և ֆինանսավորման ուղղությունները, որոնք ունեն բնապահպանական, սոցիալական կամ ներառական ազդեցություն, ինչպես նաև նպաստում են կայուն զարգացման նպատակների իրականացմանը: Մասնավորապես, պորտֆելում դիտարկվել են.

- կանաչ կամ բնապահպանական ազդեցություն ունեցող ֆինանսավորումները,
- սոցիալական վարկեր- կանանց, երիտասարդներին, գյուղական և մարզային տարածքներում տրամադրված վարկերը,
- ինչպես նաև վերը նշված ուղղությունների համադրությամբ ձևավորված ֆինանսավորումները:

Դասակարգման համար հիմք է ընդունվել Բանկի ներքին կայունության դասակարգման համակարգը՝ հաստատված Բանկի բնապահպանական և սոցիալական կառավարման կոմիտեի կողմից:

Այս մոտեցումը Բանկին հնարավորություն է տալիս առավել համակարգված գնահատել և կառավարել կայունության հետ կապված ռիսկերն ու հնարավորությունները, բարձրացնել պորտֆելի թափանցիկությունը և զարգացնել կայուն ու պատասխանատու ֆինանսավորման գործիքները:

Կայուն վարկի չափանիշ	Մնացորդ (հազար դրամ)	Մասնաբաժինը բիզնես վարկային պորտֆելում ըստ գումարի %	Մասնաբաժինը բիզնես վարկային պորտֆելում պորտֆելում ըստ քանակի %
Կանաչ վարկեր	199,675,077	22%	7.5%
Սոցիալական վարկեր, այդ թվում	157,265,683	17.5%	34.5%
Վարկեր կանանց	47,553,214	5%	10%
Վարկեր երիտասարդներին	33,316,140	4%	5%
Վարկեր գյուղական համայնքներին	76,396,329	8.5%	20%

Հարկ է նշել, որ կանաչ վարկերի 44.4%-ը պարունակում են նաև սոցիալական բաղադրիչ:

Պորտֆելի հետագա հաշվետու ժամանակահատվածների համար դասակարգումը կնպաստի կայուն վարկավորման ծավալների հետագա չափելիությանը, ներքին նպատակային ցուցանիշների սահմանմանը, ինչպես նաև միջազգային լավագույն փորձին և կարգավորող պահանջներին համապատասխան ռազմավարական զարգացմանը:

Բանկի կենսակայության ռազմավարության, կառավարման համակարգի, քաղաքականության, բացահայտումների և շահագրգիռ կողմերի ներգրավվածության մեխանիզմների մասին մանրամասն և անընդհատ թարմացվող տեղեկությունները կարելի է գտնել Բանկի պաշտոնական կայքի «Կայուն զարգացում» էջում:

https://ardshinbank.am/Information/esg-homepage?lang=hy

Բանկում գործում է հատուկ բնապահպանական և սոցիալական հարցերով բողոքների ներկայացման մեխանիզմ՝ հնարավորություն տալով գործընկերներին, ազդակիր համայնքներին և այլ շահագրգիռ անձանց վեր հանել Բանկի գործունեության կամ ֆինանսական նախագծերի հետ կապված իրենց բնապահպանական կամ սոցիալական մտահոգությունները:

Բոլոր ազդակները մշակվում են ըստ հաստատված ներքին ընթացակարգերի՝ ապահովելով թափանցիկություն, հաշվետվողականություն և արձագանքման պատշաճ մեխանիզմներ:

https://ardshinbank.am/Information/esg-contact-us?lang=hy

Նախաձեռնությունները աջակցում են կենսակայունությունը իր հիմնական բիզնես գործունեության մաս դարձնելու և կայուն ու պատասխանատու տնտեսական զարգացմանը նպաստելու Բանկի երկարաժամկետ նպատակին:

Որպես Հայաստանի խոշորագույն ֆինանսական հաստատություն՝ Բանկը շարունակում է հանձնառու լինել կայունության ինտեգրմանը իր կառավարման ռազմավարության և ռիսկեր կառավարման շրջանակում՝ նպաստելով երկարաժամետ դիմակայունությանը և կայուն տնտեսական զարգացմանը: